ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2014 թվականի N 118 –Ա

ԳՅՈՒՄՐՈՒ N 6 ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ <<ԱՌԴԱ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքային սեփականություն համարվող (սեփականության վկայագիր 1993389) Գյումրու N 6 նախակրթարանի շենքը գույքի անհատույց օգտագործման պայմանագրով (պայմանագիր 2005 թվականի սեպտեմբերի 14-ի N 2138) 99 տարի ժամկետով օգտագործման է տրամադրվել <<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամին, սակայն վերջինս այն նպատակային նշանակությամբ չի օգտագործում և տվել է գրավոր համաձայնություն՝ շենքը համայնքին վերադարձնելու համար (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի սեպտեմբերի 16-ին N 8322 թվագրմամբ): Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը դիմել է Գյումրու քաղաքապետին՝ նոր ստեղծվող մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնի տեղակայման համար տարածք տրամադրելու խնդրանքով (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի սեպտեմբերի 1-ին N 7819 թվագրմամբ):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել <<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամի հետ 2005 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված գույքի անհատույց օգտագործման N 2138 պայմանագրի գործողությունը և լուծել այն:
2. Գյումրու համայնքային սեփականություն համարվող Կարեն Դեմիրճյան փողոցի N 23 հասցեի 452,00 (չորս հարյուր հիսուներկու) քառակուսի մետր մակերեսով N 6 նախակրթարանի շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 1043,2 (հազար քառասուներեք ամբողջ երկու տասներորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը՝ նորաստեղծ մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնը տեղակայելու համար:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել շենքի և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագրեր:

Կողմ (18)	**Դեմ (1)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____	Լ.Բարսեղյան_____	
Գ. Ադամյան _____		

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» սեպտեմբերի 2014 թ.